«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ

վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Հայոց լեզվի ուսուցումը հիմնական դպրոցում»

Առարկա- Հայոց լեզու և գրականություն

Դպրոց- Սիզավետի միջնակարգ դպրոց

Կատարող՝ Շահինյան Թեհմինե Տիգրանի

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն ---------- 3

Գլուխ առաջին: **Հայոց լեզվի ուսուցման խնդիրները և կազմակերպումը հիմնական դպրոցում:** ----------4

Գլուխ 2. Գործնական աշխատանքների դերը հայոց լեզվի ուսուցման գործում----------12

Եզրակացություն ---------- 16

Գրականության ցանկ ----------18

Ներածություն

Լեզուն ժողովրդի ֆիզիկական, հոգևոր, մտավոր կյանքի արտացոլումն է: Նա ներառում է ոչ միայն ժողովրդին շրջապատող բնությունը, նրա պատմությունը, կենցաղը, բարքերը, հավատալիքները, նրա հոգեբանությունը, հոգևոր, մշակութային արժեքները, այլ նաև նրա ձգտումները, ապագան: Լեզուն ժողովրդի լավագույն բնութագիրն է և ժողովրդի բնավորության մեջ ներթափանցելու լավագույն, գուցե և միակ միջոցը, ինչքան խորանում ենք լեզվի մեջ, այնքան լավ ենք հասկանում այն կրող ժողովրդի բնավորությունը: Մայրենի լեզվի միջոցով երեխան հոգևոր ուժ և մտավոր կարողություն է ստանում, ճանաչում է ինքն իրեն:

Մայրենի լեզվի ուսուցման համար հիմնավոր ու ելակետային է համարվում, որ.

- լեզուն մարդկային հաղորդակցման, իրականության ճանաչման միջոց է, ժողովրդի ոգու, նրա աշխարհընկալման արտահայտություն.
- լեզվի միջոցով երեխան յուրացնում է սերունդների փորձը, մարդկային մշակույթը, հաղորդակցվում սեփական ժողովրդի ազգային մշակույթին.
- լեզուն՝ որպես հաղորդակցման միջոց, ձևավորում է մարդու հասկացությունների-կատեգորիաների ապարատը, զարգացնում է հիշողությունն ու մտածողությունը, այսինքն՝ լեզուն ապահովում է մարդու մտավոր զարգացումը.
- լեզվի զարգացման մակարդակը շատ բանով կախված է հասարակության՝ այդ լեզուն կրողների զարգացման մակարդակից, հասարակությունը պատասխանատու է մայրենի լեզվի վիճակի համար, պարտավոր է մտածել լեզվի մաքրության մասին.
- լեզուն կենդանի, զարգացող համակարգ է և անընդհատ փնտրում է մտքի, զգացմունքի, ապրումի արտահայտության համարժեք ձևեր:

Դպրոցը մայրենիի յուրացման ընթացքն ապահովող կարևոր օղակներից է, որտեղ լեզվի ուսուցումը նպատակաուղղված է՝

- մայրենի լեզվի անաղարտության և առաջնայնության պահպանմանը.
- սովորողի կողմից մայրենի լեզվով՝ բանավոր և գրավոր խոսքի միջոցով, սեփական մտքերը, հույզերն արտահայտելու, մարդկանց հետ հաղորդակցվելու, շրջապատող աշխարհը և մարդկանց հասկանալուն, բնության, հասարակության և մարդու մասին գիտելիքներ ստանալուն.

- սովորողների կողմից լեզուն որպես մշակութային արժեքի ընկալմանը, այն կրելու, պահպանելու ու տարածելու անհրաժեշտության գիտակցմանը.
- սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու և զարգացնելու, ինքնակրթության, ինքնադաստիարակության, ինքնակատարելագործման մղելուն:

Հիմնական դպրոցում հայոց լեզվի ուսուցումը իրականացվումէ տեսական և գործնական աշխատանքներով:

Գլուխ առաջին: Հայոց լեզվի ուսուցման խնդիրները և կազմակերպումը հիմնական դպրոցում:

Հիմնական դպրոցում մայրենի լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- գրավոր ու բանավոր ճիշտ խոսքի և հստակ արտահայտման անհրաժեշտ հմտությունների մշակում.
- սովորողի խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զորացում. մեդիահմտությունների անընդհատ զարգացման միջոցով խոսքի, ստեղծագործական մտահղացումների հրապարակայնացում, հանրայնացում (բլոգի, կայքի, սոցցանցի և վիրտուալ այլ միջոցներով).
- վերլուծական ու նկարագրական հմտությունների, ստեղծագործական, քննադատական մտածողության զարգացում.
- լեզվաբանական գիտելիքների յուրացման և լեզվական նյութի միջոցով՝ սովորողների ընդհանուր կրթական հայացքների շրջանակի ընդարձակում.
- համացանցային տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն, բառարաններից և տեղեկատու աղբյուրներից օգտվելու հմտության զարգացում:

Ուսուցման միջավայրը

Նյութական միջավայրը՝

- ուսումնական կաբինետ-ընթերցասրահ՝ անխափան անլար ինտերնետ կապով, ձայնային ուժեղարարով, դասավանդողի, սովորողների անհատական համակարգիչ, տեսագրող, ձայնագրող, լուսանկարող թվային միջոցներ.
- ուսումնական անհատական թվային միջոցներ (պլանշետ, նեթբուք, նոթբուք), ֆոտոխցիկ, ձայնագրիչ.
- դպրոցի, կրթահամալիրի այլ ուսումնական տարածքները, այդ թվում՝ բակը.
- քաղաքը՝ թանգարան, ցուցասրահ, համերգասրահ, թատրոն, կինոթատրոն, մշակութային այլ կենտրոն, հուշարձան, փողոց, այգի.
- հանրապետության գյուղ, քաղաք, տեսարժան վայր, ճարտարապետական կոթող, պատմության, բնության հուշարձան:

Մեդիամիջավայրը՝

- անհատական համակարգչում (պլանշետ, նեթբուք, նոթբուք) դասընթացի ծրագրով որոշված համակարգչային ծրագրեր, ուսումնական մեդիագրականություն, էլեկտրոնային առարկայական թղթապանակ).
- դասարանի, դասավանդողի, սովորողի անհատական ուսումնական բլոգներ.
- հանդեսներ՝ պատանեկան գործող և որպես ուսումնական նախագիծ ստեղծվող ամսագրեր
- ծրագրերի իրականացմանն առնչվող մեթոդական մշակումները

դասավանդողին **անհրաժեշտ գործիքները**՝ համացանցին միացված անհատական համակարգիչ (նոթբուք-նեթբուք-պլանշետ), տեսագրող, ձայնագրող, լուսանկարող թվային միջոցներ:

Համակարգչային անհրաժեշտ ծրագրերը՝

- տեքստի ստեղծման ծրագրեր (MS Office կամ համարժեք այլ).
- թվային գրականության ընթերցանության համար (Adobe Reader, WinDjView reader և/կամ համարժեք այլ).
- աուդիո-, տեսանյութի ստեղծման-մոնտաժման ծրագրեր (Adobe Premier Pro կամ համարժեք այլ).
- աուդիո-, տեսանյութի օգտագործման համար (Adobe Flash Player, համարժեք այլ).
- ուսումնական այլ նյութերի ստեղծման և օգտագործման, ուսումնական աշխատանքի արդյունքների ներկայացման համար՝ Smart Notebook, MS Power Point, նման այլ.
- էլեկտրոնային օրագրի, նշումների գրքի տարբերակներ (ինչպես MS Onenote):

Հայոց լեզվի ուսուցման կազմակերպումը

Ուսումնական պարապմունքի ծրագիրը ուսուցչի օրագրում տեղադրվում է մինչև առաջադրանքները:

- Ուսուցումը մշտապես հենվում է լեզվի իրական գործառության վրա՝ կարևորելով, որ սովորողը կարողանա միտքը ձևակերպել, անկաշկանդ հաղորդել. հասկանալ և հասկանալի լինել, խոսքը դարձնել հրապարակելի: mskh.am սոցիալական ցանցը՝ կայքը՝ իր TV-ով, ռադիոյով, ենթակայքերով ու էլեկտրոնային ամսագրերով, դասարանական և անհատական բլոգները, այլ սոցիալական ցանցերում սովորողների անհատական էջերը ստեղծում են սովորողների խոսքային ինքնարտահայտման պահանջմունքի խթանման և բավարարման իրական միջավայր, շփման-հաղորդակցման ազատ և բնական պայմաններ: Խոսքի յուրացման աշխատանքը ստեղծագործական աշխատանք է, որը

կապվում է սովորողի առօրյայի, գործունեության և միջավայրի (ընտանիք, բակ, թաղ, դպրոց), կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված ստուգատեսների-փառատոների, տոների-ծեսերի հետ: Այսպիսի միջավայրում, ուր ամեն պահի իր խոսքին հետևում են ընկերները, ուսուցիչներն ու ծնողները, ծանոթ ու անծանոթ մարդիկ, սովորողը գործնականում յուրացնում է անձնական կենսափորձի հետ կապված շարադրություն, տպավորություն, նկարագրություն, լուր, հարցազրույց, ռեպորտաժ, հաշվետվություն ստեղծելու հմտություններ, սովորում է նաև իրեն հետաքրքրող թեմաներով լրաքաղ անելով ու փոխադրելով, թարգմանություններ անելով, արձագանքելով այլոց խոսքին, մասնակցելով առցանց քննարկումների:

- Ուսուցումը կազմակերպվում է ուսումնական թվային միջոցների լիարժեք և ամբողջական կիրառմամբ: Ուսումնական պարապմունքը կազմակերպվում է պրոյեկտորի, էլեկտրոնային գրատախտակի, համացանցի, անհատական համակարգիչների, ձայնագրիչի կիրառմամբ: Ուսումնական նյութերն ստեղծվում են՝ օգտագործելով համակարգչային նոր ծրագրեր: Թվային ձայնագրիչը, ֆոտոխցիկը, բջջային հեռախոսը և այլ թվային միջոցներ օգնում են ասելիքը ներկայացնել նաև լուսանկարներով, աուդիո- և տեսանյութով՝ ամբողջացնելով ինքնարտահայտման հնարավորությունը:
- Խոսքի ուսուցումը-յուրացումը անընդհատ աշխատանք է, չի սահմանափակվում մայրենի լեզվի ընդհանուր կամ ընտրությամբ դասընթացի ուսումնական պարապմունքով: Սովորողի խոսքային աշխատանքը համացանցում (նրա հրապարակած նյութերը, կարծիքները) ուսումնական աշխատանք է: Սովորողի ուսումնական աշխատանքը կազմակերպվում է համացանցի միջոցով՝ սովորողի-ուսուցչի էլեկտրոնային հասցե, օրացույց-օրագիր, շտեմարան (onedrive, googledrive և այլ), էլեկտրոնային նամակ, ուսուցչի-սովորողի-դասարանի բլոգ, մեդիագրադարան, կայք, սոցիալական ցանց:
- Լեզվական գիտելիքների յուրացման աշխատանքը նաև հետազոտական աշխատանք է, որի ժամանակ սովորողը ինքնուրույն վերլուծում և համադրում է, օրինաչափություն գտնում, սահմանում: Որպեսզի սովորողը հանգիստ, հաստատուն և ինքնավստահ անցնի որոշակի ճանապարհ և ամեն հաջորդ քայլին ավելի ընդունակ դառնա ինքնուրույն առաջ շարժվելու, նրան առաջարկվող աշխատանքը բավարարում է հետևյալ պայմաններին.
  - մատչելի է այնքան, որ սովորողը ցանկանա և կարողանա հնարավորին չափ ինքնուրույն կատարել,

- համապատասխանում է սովորողի մտավոր, հոգեկան և բարոյական մակարդակին,
- նպաստում է սովորողի հոգևոր աշխարհի, արժեքային կողմնորոշման, աշխարհայացքային պատկերացումների ձևավորմանը:

- Որևէ դասագիրք չի կարող լինել ուսումնական միակ կամ գլխավոր նյութը, տեղեկատվության միակ աղբյուրը. ուսումնական նյութերը անընդհատ թարմացվում-հարմարեցվում են սովորողին: Ուսումնական նյութերի հիմնական շտեմարանը մեդիագրադարանն է, որի բաժանորդն են սովորողն ու ուսուցիչը: Մեդիագրադարանն անընդհատ լրացվում է թվային (այլոց կողմից և տեղում՝ կրթահամալիրի սովորողների, ուսուցիչների կողմից թվայնացված) գրքերով, համացանցային ռեսուրսներով և կրթահամալիրի ուսուցիչների, սովորողների և այլոց ստեղծած տեսա-աուդիոնյութերով: Ուսումնական նյութեր ընտրելիս և հաձնարարելիս ուսուցիչը նկատի է ունենում նաև սովորողի ընդունակությունները և նախասիրությունները:
- Մայրենի լեզվի պահպանության խնդիրը մայրենիի ուսուցչի մենաշնորհը չէ: Խնդիրների մի մասը ընդհանուր է հանրակրթական ծրագրում ընդգծրկված բոլոր բնագավառների դասընթացների համար: Հանրակրթական որևէ դասընթացի ծրագիրը, ուսումնական տվյալ բնագավառի հանրակրթական նպատակներից բխող խնդիրներից բացի, ներառում է նաև լեզվական խնդիրներ.կարդալու (ըմբռնելու, փոխադրելու) կարողության ձևավորում և զարգացում.լսելու (ըմբռնելու, փոխադրելու) կարողության ձևավորում և զարգացում.որոշակի թեմայով խոսքի ձևակերպման կարողության ձևավորում և զարգացում. մայրենի լեզվի անաղարտության և զարգացման համար պատասխանատվության զգացման զարգացում:Այլ առարկայի դասընթաց վարողը ոչ միայն ինքն է գրական մաքուր հայերեն խոսում, այլև հետևում է սովորողի խոսքին, խոսքային աշխատանք կազմակերպելիս համագործակցում է մայրենի լեզվի ուսուցչի հետ, տեքստեր առաջարկում մայրենի լեզվի ուսումնական պարապմունքներին՝ որպես վարժության նյութ:

Սովորողի ուսումնական աշխատանքը: Սովորողը գրագետ է դառնում խորասուզված մտավոր աշխատանք կատարելու ընթացքում: Լեզվական-խոսքային կարողությունների զարգացմանն են ուղղված.

ա) ուսումնական նյութը՝ որպես խոսք, ըմբռնելուն ուղղված աշխատանք.

- անծանոթ բառերի, եզրույթների բացատրություն,

- նախադասությունների վերաշարադրելուն և հոմանիշ կառույցներով փոխարինելուն ուղղված աշխատանք, տեքստի փոխադրություն,
- տեքստի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում,
- մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության գործածում և այլն.

բ) բանավոր և գրավոր խոսքի մշակման, լեզվական օրինաչափությունների յուրացման վարժությունների և առաջադրանքների կատարում.

գ) խոսքային-արտադրական (ստեղծագործական) աշխատանք.

- Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու կայքերում հոդվածների (քերականական, բնագիտական, մաթեմատիկական, հասարակագիտական, տեխնոլոգիական, մարզական, արվեստի) առցանց խմբագրում-սրբագրում,
- Վիքիդարանում և հանրագիտարանային հայալեզու կայքերում հոդվածների ներմուծումը,
- Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու կայքերում օտարալեզու (ռուսերեն, անգլերեն) հոդվածների թարգմանությունը,
- հետաքրիր, ուսումնական այլ նյութերի թարգմանություն բլոգի, կայքի, ամսագրի, որևէ ուսումնական պարապմունքի համար,
- ուսումնական պարապմունքների ժամանակ՝ բանավոր և ուսուցչի բլոգում, mskh.am սոցիալական ցանցում՝ առցանց քննարկումների կազմակերպումը,
- ուսումնական այլ նյութերի ստեղծումը.

դ) բանավոր խոսքի վերլուծում-խմբագրում. սովորողը գտնում է խոսքի քերականական-ոճական, հնչերանգային թերությունները, հիմնավորում փոփոխությունը (ուսանելի է այդ նպատակով օգտագործել նաև այլ առարկաների դասերին սովորողի կազմած բանավոր խոսքի՝ բանավոր փոխադրության, խնդրի քննարկման, թեորեմի ապացուցման և այլ խոսքի ձայնագրությունները), հետևում է իր բանավոր խոսքին, այն հասկանալի դարձնելու և ճշգրտելու համար մի քանի անգամ (ինչքան անհրաժեշտ է) վերաշարադրում միտքը.

ե) գրավոր խոսքի վերլուծում-խմբագրում. սովորողը գտնում է քերականական-ոճական, ուղղագրական, կետադրական թերությունները, հիմնավորում փոփոխությունը, աշխատում իր գրածի վրա, հասկանալի և ճշգրիտ դարձնելու համար, անհրաժեշտության դեպքում, մի քանի անգամ վերաշարադրում ու խմբագրում (նաև այլ առարկաների

դասերի ժամանակ կազմած գրավոր խոսքը).
զ) ներկայացում (խնդիր, առաջարկ, տնային, ուսումնական-հետազոտական աշխատանքի ընթացքը, արդյունքը և այլն).
է) հետազոտական-ստեղծագործական աշխատանք. մեդիաօլիմպիադայի առաջադրանքի կատարում, հետազոտական նախագծի մշակում և իրականացում: Նախագիծը կարող է առնչվել ուսուցվող լեզվաբանական թեմային, կարող է լինել կրթահամալիրի ուսումնական օրացույցով որոշված ստուգատեսի, ստեղծագործական հավաքի ծրագրով որոշված աշխատանք, լրագրողական հետաքննություն և այլն.
ը) ստուգողական աշխատանք (ինքնաստուգում, ստուգում):

Ուսուցիչը կարևորում է կազմակերպված ու ճիշտ խոսքը, սովորեցնում իր խոսքը դիմացինի նկատմամբ վերաբերմունքի չափանիշ համարել: Սովորողը սկսում է տեսնել իր խոսքի մի (մանավանդ՝ վերջնական) տարբերակի առավելությունը մյուսներից: Նա այսպես նախ մշակում է սեփական ոճի տարրերը, հետո՝ գրավոր և բանավոր արտահայտվելու իր ոճը, յուրացնում խոսքային վարքի կուլտուրան՝ սովորում է ըստ անհրաժեշտության խոսել, լսել, արձագանքել, մասնակցել քննարկումների, բանավիճել: Լեզվական նյութը (տարբեր ոճի, ժանրի, տիպի տեքստերը, որ գործածվում են ուսուցման ընթացքում) անմիջականորեն ուղղված է լեզվի յուրացմանը՝ և՛ գիտակցված, և՛ ոչ գիտակցված մակարդակով: Բացի կոնկրետ առաջադրանքը կատարելուց, սովորողը նյութից ակամա վերցնում է լեզվական կառույցներ ու կաղապարներ, սեփականում բառեր ու արտահայտություններ:Լեզվական նյութի, կատարված լեզվական աշխատանքի ու զանազան շարադրությունների քննարկումները, զրույցներն ու բանավեճերն օգնում են, որ սովորողը մտքերը զրուցակցի համար հասկանալի ու փաստարկված շարադրել, լսել, տրամաբանված խոսել սովորի, մտածել՝ լսելու ընթացքում, իր և ընկերների խոսքում գտնել հակասություններն ու անճշտությունները, համոզել, ապացուցել, համաձայնել, հանդուրժել տարակարծությունը:Լեզվաբանական գիտելիքների յուրացումը երկակի է նպաստում սովորողի խոսքի մշակմանը: Դա միաժամանակ և՛ միջոց է դառնում, որ նա մտածի և խոսի, և՛ հիմք՝ լեզվագործունեության հետագա զարգացման համար: Մի կողմից՝ նա դատողություններ է անում և ձևակերպում՝ յուրացնելով խոսքի որոշակի ոճ ու կաղապարներ, մյուս կողմից սովորում է օրինաչափություններ ու դրանք գործածում խոսքում: Լեզվական համակարգն ուսուցանող առաջադրանքների մեծ մասը (մանավանդ՝ թեմաներն ամփոփող) ուղղված է խոսքին: Ուսուցիչն անընդհատ հետևում

Է, որ սովորողի խոսքը կաղապարված ու միօրինակ չլինի, բայց և ենթարկվի ուսուցանված լեզվական օրենքներին և օրինաչափություններին: Ուղիղ գրելու (ուղղագրությունը յուրացնելու) համար սովորողն աշխատում է ուսումնառության ամբողջ ընթացքում արտասանությամբ և գրությամբ տարբեր բառեր գործածելու, ուղղագրական օրենքներ ու կանոններ յուրացնելու, նաև՝ գրածը ճշտելու, կոնկրետ բառի ուղղագրության վրա ուշադրություն դարձնելու միջոցով: Ուսուցչի խնդիրը նաև ուղղագրական բառարաններից օգտվել սովորեցնելը և այդ աշխատանքին վարժեցնելն է:**Ընթերցանության** նյութը՝ դասական և ժամանակակից մանկա-պատանեկան գրականության նմուշներ, հոդվածներ, գիտահանրամատչելի նյութեր, որոշվում է՝ հետևելով կրթահամալիրի ուսումնական օրացույցին, ընտրվում է կրթահամալիրի մեդիագրադարանից, կրթահամալիրի կայքից և ենթակայքերից, էլեկտրոնային ամսագրերից, ԶԼՄ-ներից: Այդ թվում՝ գրաբար՝ գրականության ծրագրով նախատեսված հատվածներ հայ հին գրականությունից (հայ հին վիպերգության հատվածներ, Նարեկացու տաղեր և այլն), առակներ (խրատներ) Հին Կտակարանից, Նոր Կտակարանից, երաժշտության, ծեսի՝ ծրագրով նախատեսված շարականներ: **Լեզվական** նյութը: Սովորողի տեքստն է (գրավոր և առդիո), որի սրբագրման-խմբագրման միջոցով սովորողը նաև յուրացնում է լեվական գիտելիքներ, գործնական քերականական վարժություններ՝ կրթահամալիրում ստեղծված ուսումնական ձեռնարկներից, լեզվաբանական խնդիրներ:

Տեքստային աշխատանքը: Գրավոր և բանավոր շարադրում՝ տպավորություն, նկարագրություն և բնութագրում, լուր, ակնարկ, հարցազրույց, օտար լեզուներից թարգմանություն, փոխադրում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

Լեզուն հաղորդակցման հիմնական միջոցն է, իսկ հաղորդակցումը պարզապես կենսական պահանջ է, ուստի լեզվի գործնական ուսուցման պահանջը ժամանակի ամենահրատապ և կենսական խնդիրներից է։

Այդ առումով կարևորվում են նաև հայոց լեզվի և գրականության գործնական աշխատանքները։ Իր աշխատանքային գործունեության մեջ յուրաքանչյուր ուսուցիչ զգացել է, որ գործնական աշխատանքներով չամրապնդված տեսական նյութը չի հիշվում (կամ մասամբ է հիշվում) սովորողների կողմից։ Եվ հակառակը, եթե տեսական գիտելիքը զուգակցվում է գործնական, իրավիճակային, հետազոտական աշխատանքներով, ապա այդ գիտելիքը գիտակցվում է որպես պիտանի և կիրառելի, հետևաբար այն հիմնականում չի մոռացվում։

Արդյունավետ դասավանդման համար նորօրյա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայական գիտելիքի խոր իմացություն, այլև ուսուցման և ուսումնառության կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողունակություն։

Անհրաժեշտ է, որ դասը պլանավորող ուսուցիչը նախապես վեր հանի թեմայի շրջանակներում աշակերտի ունեցած գրագիտության և գործնական հմտության աստիճանը։ Սա կօգնի ճիշտ պլանավորել և ճիշտ ընտրել նոր գիտելիքի ուսուցման դասատիպը։ Սակայն արդյունավետ կլինի այն ուսուցչի աշխատանքը, որն անընդհատ կսովորի, կփնտրի, կփորձարկի նոր վարժություններ, որոնք այսօրվա սովորողին կկապեն թեմային, գրքին, ուսումնական գործընթացին։

Անպայման պետք է նշել տեղեկատվական, հաղորդակցական միջոցների բազմազանությունն ու կիրառության դաշտի ընդլայնումը։ Ուստի ստեղծագործ ուսուցիչը պիտի վարպետորեն ուղղորդի իր աշակերտներին՝ նրանց տարիքային հետաքրքրասիրությունը դարձնելով ուսումնական հետաքրքրվածություն։

Այս աշխատանքում կփորձենք ներկայացնել հայոց լեզվի ուսուցման գործնական ուղղվածությանը, այնպիսի մեթոդներ, հնարներ, վարժություններ առաջարկել, որոնք կապահովեն այդ գործնականությունը։

Կանդրադառնանք նաև նախագծային աշխատանքների էությանն ու կիրառությանը հայոց լեզվի և գրականության դասաժամերին։

«Գործնական աշխատանք» եզրույթը միանշանակ սահմանում չունի, բայց հայոց լեզվում կիրառում ենք՝ «գործնական գրության» ձևերը՝ նամակ, դիմում, արձանագրություն, հարցազրույց… Ուստի փորձենք հայոց լեզվի և գրականության ուսուցման համատեքստում սահմանել, որ «գործնական աշխատանք» պայմանականորեն նշանակում է՝ տեսական գիտելիքի գործնական կիրառում:

Լեզվի գործնական ուսուցումը նշանակում է՝

ա) լեզվի ուսուցումն այնպես կազմակերպել, որ յուրացումը լինի գիտակցական,

բ) սովորած գիտելիքները դառնան գործնական կարողություններ,

գ) որ գրավոր և բանավոր խոսքում չլինեն այնպիսի լեզվական սխալներ, որոնք աշակերտը սովորել է դպրոցում:

Ուսուցման ձևեր, մեթոդներ, եղանակներ ընտրելիս պետք է նկատի ունենալ ուսուցանվող թեմայի գործնական նշանակությունը և արժեքը և համեմատաբար քիչ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք թեև նախատեսված են ծրագրով, բայց ըստ էության չունեն գործնական արժեք և ծրագրում ընդգրկվում է նյութի ամբողջությունն ապահովելու պատճառաբանությամբ:Նման դեպքերում ուսուցիչը կարող է կատարել ծրագրային հարմարեցումներ: Այսպես, բայի սեռը դժվարամարս թեմա է: Ինչո՞ւ: Որովհետև այն զուտ տեսական հարց է և ձևաբանական մակարդակում շատ բայերի սեռը որոշելը հեշտ չէ: Այնինչ բայի խնդրառությունը, որ խիստ գործնական հարց է, գրեթե անտեսված է: Ուրեմն բայի սեռը ձևաբանության մեջ պետք է անցնել թռուցիկ, ընդհանուր ծանոթության կարգով, նրան անդրադառնալ շարահյուսության բաժնում՝ այն քննելով խնդիրների հետ կապված:

Կան լեզվի գործնական ուսուցման վերաբերվող այնպիսի ընդհանուր ձևեր, մեթոդներ ու եղանակներ, որոնք այս կամ այն չափով կիրառելի են գրեթե բոլոր թեմաներն անցնելիս: Դրանցից մեկը սովորողներին սահմանումների ձևակերպմանը մասնակից դարձնելն է: Սովորողի ձեռբերած յուրաքանչյուր գիտելիք կլինի գործնականում կիրառելը, եթե նա այն ձեռք է բերել հասկանալով: Աշակերտներն իրենք պետք է կարողանան ձևակերպել կանոնները, սահմանումները: Իսկ դա կարող են անել, որովհետև որևէ հասկացություն սահմանել նշանակում է թվարկել այդ հասկացության էական, հիմնական հատկանիշները:

Աշակերտների մտածողության զարգացումը լեզվի գործնական ուսուցման պայմաններից մեկն է:

Ինչպե՞ս ապահովել, ասենք, հնչյունաբանության գործնական ուսուցումը:

Հնչյունաբանություն- Հնչյունի սահմանումը, հնչյունների դասակարգումը, ձայնավոր և բաղաձայն, վերջիններս՝ ձայնեղ, խուլ և հնչեղ խուլ անմիջական գործնական արժեք չունեն, սակայն սրանց ուսուցումն անհրաժեշտ է հաջորդ՝ շեշտ, հնչյունափոխություն, վանկ տողադարձ, այուհետև ուղղախոսության և ուղղագրության գործնական արժեք ունեցող թեմաների ուսուցման համար:

Ուսուցիչը նախ պետք է բացատրի, որ հնչյունափոխությունը պիտի սովորել հերթականությամբ, հետևյալ պլանով.

- . Հնչյունափոխության պատճառը, այն է՝ շեշտի տեղափոխությունը:
- Հնչյունի դիրքը բառի մեջ. 1. բառասկիզբ, 2. Բառամեջ (բաց վանկ), բառավերջ – յուրաքանչյուր ձայանավոր հնչյունափոխություն պետք է բացատրել այս հերթականությամբ:
- Այնուհետև պետք է պարզել, թե երբ է տեղի ունենում հնչյունափոխություն.
  երբ բառը վերջից աճում է, նոր վանկ է ավելանում, իսկ սա ավելի հաճախ լինում է՝ բառակազմություն, ապա՝ հոլովման ավելի քիչ՝ գոյականի հոգնակիի կազմության ժամանակ:

Աշակերտները, իմանալով ընդհանուր կանոնը, նույն բառը հնչյունափոխում են նշված 3 կանոններով:

Ժողովուրդ – ու ձայնավորը հնչյունափոխվում է բառակազմության և հոլովման ժամանակ՝ ժողովրդական, ժողովրդասեր, ժողովրդի, ժողովրդից և այլն:

Սխալմամբ հնչյունափոխում են նաև հոգնակիի կազմության ժամանակ՝ ժողովուրդներ:

Լինում է նաև հակառակը՝ բառը չեն հնչյունափոխում նաև բառակազմության և հոլովման ժամանակ՝ ժողովրդական, ժողովուրդի: Յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է լավ իմանալ, թե տվյալ լեզվական նյութի հետ կապված ինչ տարածված սխալներ կան, և թեման բացատրելիս պետք է ընդգծել հենց այդ սխալները, բացատրել, սովորեցնել ճիշտը, որ սովորողները լավ մտապահեն և չշփոթվեն:

Զուտ գործնական արժեք ունեն նաև «Վանկ» և «Տողադարձ» թեմաները: Յուրաքանչյուր գրավոր աշխատանքից առաջ ուսուցիչն ամեն անգամ պիտի նախազգուշացնի աշակերտներին, որ չխուսափեն տողադարձից, իսկ նման դեպքերը պիտի համարի գրավոր աշխատանքի թերություն: Թեև առաջնային է այդ թեմաների հիմքը շատ ամուր ու

հետևողական դնել, չբավարարվել միայն կանոններն անգիր ասելով, յուրաքանչյուր կանոնի վերաբերյալ շատ վարժություններ կատարել՝ ընտրելով այնպիսի բառեր, որոնք վանկատման որոշակի դժվարություններ ունեն, աշխատանքը դարձնել բազմազան. Աշակերտներից մեկին թելադրել բառեր և առաջարկել, որ դրանք վանկատված գրի գրատախտակին, իսկ մյուսները գրեն իրենց տետրերում: Յուրաքանչյուր բառ առանձին բացատրվի, մասնակցեն բոլոր աշակերտները, բառերը տողադարձել բոլոր հնարավոր ձևերով: Կարելի է այդպիսի բառերը նախապես գրել քարտերի վրա և հանձնարարել անհատական կամ զույգերով աշխատանք, ապա հավաքել աշխատանքները, ստուգել դասարանում կամ տանը, վերլուծել, նորից ու նորից բացատրել ու ստուգել:

Գործնական աշխատանքի իրականացման ի՞նչ ձև ընտրել:

Լեզվի գործնական ուսուցումը կարելի է ապահովել նաև գծապատկերների, աղյուսակների միջոցով:

Գծապատկերները լեզվական վերացական-տեսական երևույթը դարձնում են շոշափելի, տեսանելի, առարկայական:

Աղյուսակները համակարգվածություն, օրինաչափություն, տրամաբանական կապի, ընդհանրությունն են արտահայտում, նշում:

- **Ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողներն ինքնուրույնկամ ուսուցչի ուսուցմամբ//օգնությամբկարող են ստեղծել, ունենալ երևույթը պատկերող աղյուսակ(ներ):**

Ուսուցիչը աղյուսակում եղած բառերը նախապես թելադրում է աշակերտներին և պահանջում դրանք հոլովել, հոգնակին կազմել և տրված բառից նոր բառ կազմել: Երբ ավարտվում են առաջադրանքի կատարումը, աղյուսակը կախում են գրածները, ուղղում սխալները, բացատրում և համոզվում, որ բոլոր դեպքերում չէ, որ բառը կարող է հնչյունափոխվել:

Դասագրքերի վարժությունները ուսուցիչների կողմից առաջադրվող հարց-առաջադրանքները ավելի շատ ճանաչողական են, քան գործնական-կիրառական:

Զուտ գործնական նշանակություն ունեցող թեմաներ են «Շեշտը», «Հնչյունափոխությունը», «Տողադարձը», «Ուղղախոսություն և ուղղագրություն», «Բայի խնդրառություն», «Գործնական գրություններ»-ը...

Գործնական աշխատանք բառագիտությունից՝

Նպատակը՝ աշակերտին տալ բառօգտագործման հմտություն:

Հիմնական դպրոցում շեշտադրվում է բառապաշարի հարստացումը, իսկ միջնակարգ դպրոցում՝ բառի տեղին և ոճականորեն ճիշտ գործածությունը:

Եթե բառային աշխատանքը կատարվում է միօրինակ և **միակողմանի, ապա դառնում է ինքնանպատակ** և **ձևական, սրա պարզ օրինակը հոմանիշ բառերի ուսուցումն է: Սովորաբար դասագրքերում ներկայացվող աշխատանքը հիմնականում լինում է երկու տեսակ՝**

ա) լրացնել հոմանիշային շարքը

բ) բառը փոխարինել մեկ այլ հոմանիշ բառով, սակայն գրեթե չենք տալիս այսպիսի առաջադրանքներ, ինչպես՝ զանազանել, գտնել, ցույց տալ այն դեպքերը, երբ հոմանիշ բառերը նույն նախադասության մեջ կամ տարբեր տեղերում հնարավոր չէ փոխարինել մեկը մյուսով (հիշել Տերյանի օրինակը)՝ Լինեի չոբան սարերում հեռու... և Հովիվներն այնտեղ կրակ են արել...

Գործնական աշխատանքի օրինակ է բառարանից օգտվելը:

Գրականություն(հիմնական դպրոց) առարկայի գործնականությունը կարելի է ապահովել, օրինակ, հետևյալ աշխատանքներով՝

- Բնագրային աշխատանք
- Գրել գրական հերոսների անունները և յուրաքանչյուր դիմաց՝ նրան բնորոշ հատկանիշները
- Ուսուցիչը թելադրում է մարդուն բնորոշ հատկություններ և պահանջում հերոսին բնութագրելու և դրանցից ընտրել համապատասխան բառեր:(Ասում ենք՝ խիստ գործնական մարդ է (նաև գործունյա), այսինքն՝ պրակտիկ, կատարող)

Գրականությունից. – խաչբառեր, բնագրային աշխատանք

Բառապաշարի հարստացման շուրջ գործնականությունն ապահովում ենք արդեն գրականության դասերին՝ գրական երկն ընթերցելու, հերոսների կերպարները վերլուծելու, երկի վիպաշարը, գեղագիտությունը ներկայացնելու ժամանակ: Կարելի է, օրինակ, որ ուսուցիչը թելադրի հատկանշական բառեր, իսկ սովորողները դրանք բաշխեն՝ ըստ ուսումնասիրվող ստեղծագործության հերոսների աղյուսակի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտական հետազոտական աշխատանքս նպատակ ուներ մեկ անգամ ևս անդրադառնալու և կրկին արժևորելու գործնականության դերն ուսուցման և ուսումնառության գործընթացում: Փորձ արվեց ներկայացնել հայոց լեզվի և գրականության դասաժամերին գործնականության տեսակետից առավել խոցելի և հետաքրքիր թեմաները, օրինակներով ցույց տալ գործնականության ապահովման նոր մշակումներ ու մոտեցումներ:

Լեզվի գործնական ուսուցումը նշանակում է լեզվի ուսուցումն այնպես կազմակերպել, որ յուրացումը լինի գիտակցական, սովորած գիտելիքները դառնան գործնական կարողություններ, գրավոր ու բանավոր խոսքում չլինեն այնպիսի լեզվական սխալներ, ինչպես ասենք՝ բառընտրության, համաձայնության, խնդրառության, նախադասությունների կապակցության, հնչյունափոխության, ուղղագրական, ուղղախոսական և այլ բնույթի:

Սակայն արդյունավետ կլինի այն ուսուցչի աշխատանքը, որն անընդհատ կսովորի, կփնտրի, կփորձարկի նոր վարժություններ, որոնք այսօրվա սովորողին կկապեն թեմային, գրքին, ուսումնական գործընթացին: Արդյունավետ դասավանդման համար ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայական գիտելիքի խոր իմացություն, այլև ուսուցման և ուսումնառության կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողունակություն, ընդ որում՝ նոր չափորոշչային պահանջ է յուրացված գիտելիքների արդյունավետ ու նպատակային գործնականում կիրառելու կարողունակությունը:

Անպայման պետք է նշել տեղեկատվական, հաղորդակցական միջոցների բազմազանությունն ու կիրառության դաշտի ընդլայնումը:

Ստեղծագործ ուսուցիչը չպետք է լինի «բոլոր տեղեկությունների և գիտելիքի աղբյուր», նա պետք է մնա գրեթե աննկատ և ղեկավարի աշակերտների աշխատանքն անուղղակի կերպով, պիտի վարպետորեն ուղղորդի իր աշակերտներին՝ նրանց տարիքային հետաքրքրասիրությունը դարձնելով ուսումնական հետաքրքրվածություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Մ. Ասատրյան « Ժամանակակից հայով լեզվի ձևաբանության հարցեր», Ա հատոր, էջ 188_193
- ՀՀ պետական առարկայական չափորոշիչ
- http://publishing.ysu.am/en/1462877983